

ՊԱՅՄԱՆՔ

Հարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Փառապանք 12 »
Վերանայ Կ. Պոլսոյ 5 »
Փառապանք 6 »
Ստար երկիրներու 2 1/2 լ
Մանուշակ մոդը մէկ անգամի հա-
մար 3 դուրս, երկու անգամի հա-
մար 2 դուրս 5: աւելի անգամներու
համար զառ սահարկութիւն կըլ-
այ 2
Եւրոպանիւր թիւ 40 փարա արծ:



ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս Գնացած լրագրաց հանրու-
ծալքը Խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ մերտրեւեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
— Տնօրէնին տրախ ուղղութիւն Գարա-
թիա Սանարքոյար Հատակի թիւ
198, Կօրո խան, Մասիսի գրասեն-
եակը:
Հանրու ծախքը չիմարուած նա-
մակ չընդունուիր:
Չապուած նամակ, յօդուած, եւ
եւ չեն տրուիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անդրիոյ ազատականաց դէմ միշտ
զանազան եղած է թէ պահպանողա-
կան կառավարութեան դործողու-
թեանց քննադատութեամբ կը բա-
ւականանան, և չեն բացատրեր այն
հիմնադիրը՝ զոր իրենք ի դործ պիտի
դնէին եթէ Լորտ Պիքոնսֆիլտի նա-
խարարութեան տեղը ինչէին, կամ
զոր մտադիր են ՚ի դործ դնել եւ-
րոյ իրենք իշխանութեան անցնին:
Լորտ Հարթինկլըն՝ առ ընտրողս իւր
ազդեալ բանախօսութեան մը մէջ՝
այս անգամ անութեան պատասխանել
փորձեց՝ գէթ Արեւելեան գործող վե-
րաբերեալ մասին համար: Այս բա-
նախօսութեան վերջաբանին, որ արեւ-
ելից մէջ ազատական կուսակցու-
թեան բանեկը ընթացքը կը բա-
ցատրէ, մեծ կարեւորութիւն մ'ունի
ներկայ պարագայի մէջ, քանի որ ա-
զատական նախարարութեան մը կողմ-
մակութիւնը քանի մը շարքութեան կամ
միւսին իսկ քանի մ'օրուան ինքզին մ'է
այժմ:

Երեսփոխանական ժողովոյ մէջ ա-
զատական կուսակցութեան գլուխ
եղող Լորտ Հարթինկլըն, որ հաւա-
նակաւորաբար նորակազմ նախարարու-
թեան ալ գլուխ պիտի լինի, իւր
բանախօսութեան մէջ կը խոստովա-
նի թէ անկարելի է կանխառ քաղա-
քական հիմնադիր մ'որոշել այնպիսի
պարագայից համար, զոր ոչ ոք կըլ-
նայ դուշմանել այժմէն: Բայց աղիւ-
Լորտը չընդունել թէ Պէրլինի դաշ-
նադիրը վերջնական լուծում մ'է-
զած լինի: Ներկայ սերունդին, որ ար-
դէն Արեւելեան խնդրոյն երկու ե-
րևութից հանդիսատես եղած էր,
այդ թատերադրութեան ներքոյ ա-
րարածին ալ խիստ մօտ ժամանա-
կէն իւր աչաց առջև պարզուիլ տես-
նելու սահմանեալ է՝ ըստ Լորտ Հար-
թինկլընի: Արդարեւ, կըսէ, ներկայ
թուրքոյ մէջ նոյն տկարութիւնը,
կառավարական նոյն զեղծմանը, և
հպատակ ազգաց կողմէ անկասու-
թեան նոյն փափաքները կը տեսնուին,
ինչպէս նաև՝ թուրքոյէն դուրս ալ
նոյն փառասիրութիւնը և նոյն յա-
տակաղիքը, ինչ որ սակէ առաջ
տեսնուեցան: «Այս վիճակիս մէջ,
ոչ ոք կրնայ ըսել թէ Արեւելեան խնդ-
րոյն վերադառն բացումն սրջամի ժա-
մանակի համար յետո ձգուած է»:

«Եթէ ազատական նախարարու-
թիւն մը կազմուի, ըստ Հարթինկլը-
նի Մարքլըրը, կրնամք դո՛ւն սա չա-
փըն ըսել թէ մեր աշխարհավա-
րութիւնը ներկայ պահպանողական
կառավարութեան համար ազատալի
անյաջողութիւն մ'եղած աշխարհա-

վարութեան կրկնութիւն չպիտի լի-
նի, թէ և Լորտ Պիքոնսֆիլտի նախա-
րարութիւնն այդ աշխարհավարու-
թիւնն իրեն համար յաղթանակ հա-
մարելով կը պարծի, և թէ մեք
յայնժամ՝ «Անգղիոյ դորութիւնն ու
պատիւը կըսող մէջ չպիտի դնեմք ոչ-
բարենորոգեալ թուրք տէրութեան
մ'անկախութիւնն ու ամբողջութիւնը
պահպանելու համար»:

Այս ամենամանր յայտարարու-
թեանէն յետոյ, զոր իւր խօսքերը լաւ
կըսող պետական անձ մը կընէ, Լորտ
Հարթինկլըն յարեց. — «Թուրքոյ
մէջ ժողովրդեան վիճակն և իւր քը-
րխտոնեայ հպատակաց նկատմամբ
թուրք կառավարութեան ընթացքը
մեք մի միայն Ռուսիոյ և Թուրքիոյ վե-
րաբերութիւն ունեցող խնդիր մը չեմք
նկատել, որոյ մէջ մեք միջամտու-
թիւն չպիտի ունենամք եղեր մինչև
որ մեր այս կամ այն մասնաւոր շա-
հուն չդաշնէ: Չպիտի փորձեմք եւ-
րոպոյ համաձայնութիւնն արդեւու
կամարել, եթէ՝ Նախախնամութեան
շնորհիւ՝ եւրոպա համաձայնի իւր ընե-
լիք բանին վրայ: Ընդհակառակն՝ ամեն
ինչ պիտի ընեմք այդ համաձայնու-
թիւնն հաստատելու համար, և եթէ՝
բարեբաղդաբար՝ այդպիսի համաձայ-
նութիւն մը յառաջ դայ, ամեն բան
պիտի ընեմք ձեռք առնուած միջոց-
ներուն վործադրութեան համար»:
(Լորտ Հարթինկլըն, եւրոպոյ հա-
մաձայնութեան արդեւը չհանելու
յայտարարութիւն ընելով, յայտնա-
պէս ակնարկութիւն կընէ Կ. Պոլսոյ
գեղարկութեան հարցին, և Անգլիոյ կող-
մանէ Պէրլինի իշխանազարդին մերժ-
ման:)

Լորտ Հարթինկլընի այս վերջին
խօսքերուն ծանրակշիւթիւնը լաւ
կը հասկցուի դիտելով որ ազատակա-
նայցի գլուխը քիչ մ'առաջ Լորտ Պի-
քոնսֆիլտի նախարարութեան երեսին
զարկած էր ու իրողութիւնը թէ այդ
նախարարութիւնը թուրք կառավա-
րութեան եւրոպոյ մէջ պատերազմ ը-
նելու համար Բնառնուէն բերած
զօրաց փոխադրութիւնը չէր արգի-
լած, որպէս զի Թուրքիա անկարող
լինէր պատերազմելու, և այսպէս՝
առանց որ և է արեւմտեան պատ-
ճառելու չէր ստիպած զի: Գուռն
որ մեծ տէրութեանց հաւաքական
պահանջմանց առջև խնայարհէր:

Այս խօսքերը բաւական պարզ
և բացայայտ են հասկնելու համար
թէ Լորտ Պիքոնսֆիլտի յայտը երկը
ազատական նախարարութիւնը կար-
ծուածին չափ սիրահար չէ անմիջա-
մեղական սկզբան: Այլ միայն ՚ի նը-
պատա Թուրքիոյ և հակառակ եւրո-
պոյ միջամտութիւններ ընելու արդա-
մադրութիւն չունի: Ընդհակառակն
բացորոշապէս կը յայտարարէ թէ ա-
րեւելեան խնդրոյն վերադառն բացումը

չպիտի արգելու, և թէ Արեւելոյ նը-
կատմամբ եւրոպական տէրութեանց
համաձայնութեանը պիտի նպաստէ և
անոնց որոշմանց դործադրութեանը
պիտի աջակցի:

Ահա այս կէտին մէջ է ազատա-
կան և պահպանողական նախարարու-
թեանց աշխարհավարութեան գլխա-
ւոր տարբերութիւնն, որ Արեւելոյ
համար մեծ նշանակութիւն ունի, և
թուրքոյ բողոքը կառավարութեան
ալ կարեւոր աղբարարութիւն մ'է ի-
րենց աշխարհավարութեան նոր ուղ-
ղութիւն մը տալու:

Մայրաքաղաքի Անգլիական Լէ-
վընթ Հէրըլտ լրագրիւր Թուրքիոյ վա-
ճառականութեան վրայ յօդուած մը
հրատարակելով կըսէ թէ Կ. Պոլսոյ
մէջ վաճառականութեան վիճակն այ-
ժմ տալի գէշ է քան անկէ առաջ
որ և է ժամանակ մը: Գործնականա-
պէս, այս մեծ և վաճառաշահ քաղա-
քին առուտուրն հետզհետէ ոչնչանա-
լու վրայ է: Երկրին առուտուրն այժմ
առաջնականէն տարբեր պարագայից
մէջ ի դործ դրուիլը բաւական պատ-
ճառ մ'է այս վիճակին: Օրինակի ա-
զատաւ, շողենաւով յարաբերու-
թիւնը փոքր նաւահանգիստները
կարող կընեն արտադրիչ կամ սպա-
ռիչ հրապարակներուն հետ ուղղակի
յարաբերութիւն ունենալ, այնպէս
որ, շողեւարժ նաւարկութիւնը քա-
նի ընդարձակի, Կ. Պոլսոյ հեղհեղե-
իւր կարեւորութիւնը կը կորուսանէ
իրեն վաճառացի միջերանոց եւրոպոյ
կողմը տէրութեան կրած հողային
փնտնելն ալ Կ. Պոլսոյ մէջ առուտուրն
նուազման պատճառ մ'եղած են:

Բայց այս պատճառները թէ և Թուր-
քիոյ մայրաքաղաքին առուտուրը նը-
ւազեցուցին, ուրիշ կերպիւ ալ փա-
սակար աղբեցութիւն չ'ունեցան ա-
նոր վրայ: Կ. Պոլսոյ առուտուրն այս
խեղճ վիճակին բերողը նոյն իսկ կա-
ռավարական աշխարհավարութիւնն
է: Կործանիչ սկզբանց հետզհետէ կի-
րաւորութիւնն ամբողջ փոքր-Սիւսն
ամենափնտառ վիճակի մը բերաւ որ
տակաւ նաւ տակաւ իւր աղբեցու-
թիւնն զգալի կընէ նաև մայրաքա-
ղաքին մէջ: Այլ միայն երկտական յուսի
գրութիւն մ'է որոյ մասին զեղծ-
մանը երկրին ժողովուրդն իւր աշխա-
տութեան պատկերները վայելելէ զըր-
կած են, այլ և արուեստը, վաճա-
ւարանութիւն և նիւթական գար-
դաբում՝ ծանր հարուածներ կրած
են հետզհետէ ձեռք առնուած մի-
ջոյններէն, որը կայսերական դան-
ձուն երկակայանի շահ մը բերելու
համար՝ պարզապէս երկրին կեանքը
փտանցած են: Կառավարութիւնը
զո՞հ կ'ուտ տեսնելով որ թղթաղը-
րամի ոչնչացուի մը խաղաղ կերպիւ ըն-
դունուեցաւ ժողովրդէն, իւրավա-

թիւնը չ'աղբեցան, տէրութեան մեծ
մարդ իւր դարձեալ իրենց ամառական
ներն օսկւով ստանալ ունան, և մո-
ղովուրդը գլուխը խնայահեցնելով
լուսեց: Բայց դործին հետեւանքներն
այժմ կ'զգացուին Թղթաղումը չ'ըն-
ջող հրամանագիրն հազարաւոր մար-
դիկ անօթութեան մեռնելու պատա-
պարտեց, և այդ մարդիկն արդարեւ
այժմ ձայրայել թշուառութեան վի-
ճակի մէջ են: Ընդհանուր կործան-
ման համար վերջին հարուածն եղաւ
Մէթաքիքներուն վրայ եղած հրամա-
նագիրը:

Գաւառացի մէջ իրաց վիճակն ա-
հա այսպէս լինելով, կըսէ Անգլիա-
կան լրագրիւր, նոքա այժմ ոչ արտադ-
րելու կարողութիւն ունին, ոչ ալ
սպառելու: Անոնց դուրսն ու դուր-
ձիւն արդէն անյայտ եղած էին, դը-
րամաղլու խնդիրն ալ ջնջուեցաւ: Ուստի
ոչ ևս մայրաքաղաքիս շուկային կեն-
դանութիւն կուտան իրենց բնիկ ար-
տադրութիւնները գրկելով վաճառ-
ածութեան, կամ հրամաններ տալով
վաճառ ներածման եւրոպական վա-
ճառացի:

Գաւառացիք չեն կրնար մինչև
իսկ իրենց պարտքերը վճարել մայ-
րաքաղաքիս վաճառականաց, որոյմէ
վաճառք ստացած են: Բայց եթէ
գաւառացիք հետ տեղ ոչս վաճա-
ւականաց յարաբերութիւնները դո-
հացուցիչ վիճակի մէջ չեն, կառա-
վարութեան հետ առեւտրական յա-
րաբերութիւնը աւելի գէշ վիճակի
մէջ են: Կառավարութիւնն ստացած
հրապարակ ու առաջնութեանց գլխը
միայն վճարած է: Իսկ կառավարու-
թեան ուրիշ պիտոյքը մասնաւորա-
րոյ վաճառականք մեծաքանակ առ-
նելիքներ ունին, զորս ստանալու հա-
մար դուր ջանքեր կընեն, և որոյ մի-
միայն անկողն արդէն իշխեալ վաճա-
ւականաց ընելիք ըստ շահը վերձա-
յուցած է:

Իրաց այս դառն վիճակն արժանի
է կառավարութեան լուրջ հոգածու-
թեան: Իմաստուն տնօրէնութիւնը
կրնան այդ չարքները դարմանել, և
եթէ լաւ միջոցներ ձեռք առնուին
երկրին մէջ նոր դրամադրութեան մշա-
յունելու, կարելի կը լինի տեղը լը-
նել այն բնիկ դրամադրութիւն, որ վեր-
ջերս եղած տնօրէնութեանց պատ-
ճառաւ անհետացած է:

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լուստրա 7 ապրիլ,
Բնադրութեան ծանուցեալ արդիւնքն է.
283 Ազատականք.
165 Պահպանողականք.
33 Բնադրողականք.
Ազատականք 87 ամս շահեցան:
Տէ միւս Նիւս Գլխին եղած հետադ-
րէ մը կ'ընեն թէ Պառնաք իշխան իւր

Վատառողջութեան պատճառաւ կը պըն-
դէ իւր հրաժարականին վրայ :

Թայմըզը որչա՞ր կը յիշատակէ , ու
բուն նայելով Քարոյի կամն ալ հրա-
ժարական տուաւ զիտաւորութիւն ունի :

Իրաւ. բաժն.	10 5/16
Փոխ.	1865 11 1/4
"	1871 10 7/8
"	1871 65
"	1872 17 1/2
"	1873 40 3/8
Երկրորդ.	88 3/8
Արդ. բաժն.	98 3/8

Փոխի, 8 ամբիւր .
Օսմ. Բաժն. 10,

ՆՈՐԻՆ ԼՈՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Պետական խորհրդոյ անդամ Վը-
սնմ Թագրո Եֆէնտիկին իւրոյն առա-
ջին տատիճան տրուեցաւ :

Լիմնոս կղզւոյ կառավարիչ Հա-
շիմ Եֆէնտիկին Եֆէնտիկ կառավարիչ
անունանցաւ :

Երէկ ուշ տանն Լոնտոնէն եկած
հեռագիր մ'ազատականաց յաղթու-
թեան շարունակութիւնը կը ծանու-
ցանէր : Ճակատամարտը վերջանալու
մօտ է : Մինչև ցարդ 303 աղետու-
կան , 178 պահպանողական և 41 իւ-
րանապետին քննադատականք ընտրե-
ւած են : Մի միայն ազատականք
պահպանողականաց վրայ 125 անդա-
մաց մեծամասնութիւն ունին , և իւ-
րանապետաց հետ միանալով , այս մե-
ծամասնութիւնն 1866 ի կենէ : Մինչև
ցարդ 630 երեսփոխանէն 322ն ընտրե-
ւած են : Մնացած ընտրութիւնք
այս շարքու կը վերջանան : Նոր խոր-
հրդարանն երկու շտաբէն կը բա-
ցուի : Ահա յայտնաւ , եօթն տարիէ
ի վեր առաջին անգամ լինելով , Լորտ
Պիքսֆիլդ , Լորտ Սալիսբըրի և
Արքայականական նախարարութեան
բոլոր անդամներն ընդդիմադիր կու-
սակցութեան յատուկ եղաւ ամբու-
նելու : Վրայ պիտի բազմին , մինչդեռ
արդի ընդդիմադիր կուսակցութեան
գլուխները կառավարական ամբու-
նելուն վրայ պիտի տեսնուին :

Բուսական կառավարութիւնը Ս-
թիմակալան պատուանշանին մեծ
ժառանգէնը զրկելու Բէրթէլ Եֆէնտիկին
որ երբեմն Պալլադիոյ մէջ կայսերա-
կան ֆոմիտէրի պաշտօնը կը վարէր և
վերջերս ալ Տպագրական գիւնանին
անօրէնն էր :

Փերթէլ Եֆէնտիկին Բ. Դրան հայ-
ազգի պաշտօնատարաց լուսագոյն-
ներէն մին է , որք նոյնպէս ամբողջ
Օսմանեան պաշտօնատարութեան մէջ
լուսագոյն մասին կը վերաբերին : Օ-
տար կառավարութիւնն մ'իսկ ի դէպ
կը համարի սոյն Հայազգի պաշտօ-
նատարին արժանիքը ճանչել հրա-
պարակաւ , և մայրաքաղաքի մար-
տիւ Պաֆօր լրագրոյն հետ մեք ևս
կը յուսամք որ փերթէլ Եֆէնտիկին իւր
բարձր կարողութեանց ու հանգա-
մանաց համապատասխան պաշտօնի
մը կուտի , զի՝ ինչպէս յայտնի է որ-
պաղարկան անօրէնութեան պաշտօ-
նըն իրենն տեսնուելէ ի վեր անպաշ-
տօն թողուած է :

Թուրքական 1296 տարւոյ (այն
է 1880 մարտի սկիզբէն մինչև 1881
փետրուարի վերջը) երկուսոյցը (պիւտ-
ճէն) որ նախարարաց խորհրդոյ կող-
մէն կայսերական վաւերացման ներ-
կայացեալ էր , ներքին գործոց նախա-
րար Բարձր Մահմուտ Նէտիմ փաշա-
յի կողմանէ քննադատուած լինելով ,
վերաքննութեանը համար մասնա-
կուսմը մը կազմուած էր՝ բաղկացե-
ալ երեք նախկին Մեծ-Եպարքոս-
ներէ , որք են խայրէտալի փաշա Սաֆ-
վէթ փաշա և Մահմուտ Նէտիմ փաշա :

Սուլի երկուքը , նախարարաց խոր-
հրդոյ կողմանէ պատրաստուած եր-
մասոյցը գոտապարտելով հան-
գերէ , Մահմուտ Նէտիմ փաշայի բա-
րեխոսութեանց կամ հակառակա-
րութեանց հաւանութիւն չէին կըր-
ցած տալ : Ուստի վեհ. Սուլթանին
հրամանաւ , երկուսոյցը դարձեալ
նախարարաց խորհրդին զրկուեցաւ ,
խայրէտալի և Սաֆվէթ փաշայից
խորհրդակցութեամբ վերաքննուե-
լու համար : Սուլի երկու անձինքը կի-
նեցին իրենց գաղափարներն , յայտ-
նելով թէ երկուսոյցին ինչ հասկեր ,
բայց Մահմուտ Նէտիմ փաշայի ա-
ռաջարկութեանց ալ համակարծիք
չեն : Երկուսոյցի օրը նախարարաց
նոր խորհուրդ մը կազմուեցաւ , ուր
ոչ Սաֆվէթ փաշան ոչ ալ խայրէտա-
լին փաշան ներկայ էին :

Առաջին նախարար Բարձր-Սալիմ
փաշան , որ կը նախագահէր , հրա-
ւիրեց նախարարներն որ առջի երմ-
ասոյցը կնքեն , որպէս զի վեհ. Սուլ-
թանին զրկուելէ վաւերացումն Մահ-
մուտ Նէտիմ փաշան բնաւ յանձն
չառաւ զայն , և մինչև իսկ յայտարա-
րելով թէ խայրէտալի և Սաֆվէթ
փաշաներու բացակայութեան միջո-
ցին պէտք չունէր ներկայ գտնուիլ
խորհրդին , ելաւ մեկնեցաւ որպէս
Ն. Բարձրութիւնն երկուսոյցին բա-
ցըր գոցելու համար ձեռք առնուած
միջոցներն օրինաւոր և ուղիղ չէր
գտնուի , ինչպէս ցոյց տուինք մեր
երկուսական յօդուածոց միոյն մէջ ,
Բայց առաջին նախարարը պնդեց որ
իւր նախագահութեամբ ընդունուած
երկուսոյցը կնքուի , և արդարեւ կըն-
քուելով՝ վեհ. Սուլթանին ներկա-
յացաւ , որ վաւերացուց զայն : Անկէ
ի վեր Մահմուտ Նէտիմ փաշան Բ-
Դուռը չերթար , իսկ երկուսոյցին
պաշտօնական պատճենն երէկ թագ-
վիսի Վազոտայի մէջ յաւելուածովն
հրատարակեցաւ , և մեք ալ վաշն
անոր վրայ տեղեկութիւններ պիտի
տամք մեր ընթերցողաց :

Բ. Դրան կողմէ երէկ հետեւեալ
ազդարարութիւնն եկաւ մեզ .

«Ճամանակէ մ'ի վեր Կ. Պոլսոյ
լրագիրք երկրին ընդհանուր գործոց
վրայ թշնամական լեզու մը գործա-
ծել սկսած են . ուստի , որպէս զի
հարկ չմնայ խիստ պատիժներ ի գործ
դնել իրենց նկատմամբ , յատկապէս
կաղերարարու որ այսուհետեւ պատ-
շաճ լեզու մը գործածեն՝ զգուշանա-
լով խիստ խօսքեր ընելէ այն խոր-
հրդածութեանց մէջ , զորս օրական
խնդրոց վրայ կը դրեն , և Եւրոպական
լրագրերէն չվարդմանեն այնպիսի
յօդուածներ , որք երկրին շահուց
փաստակար կընան լինիլ » :

Վաղըթ լրագիրը կը ծանուցու-
նէ թէ Լոնտոնի Օսմանեան դես-
պան Միւզիւրի փաշան հեռագրաւ
իմացուցած է Բ. Դրան թէ ի մօտոյ
պաշտօնի անցնելը քաղաքական նա-
խարարութիւնը թուրքիոյ նկատմամբ
Անգլիոյ աշխարհակալութիւնը չպի-
տի փոխէ :

Թուրք լրագիրը կը դիտէ սակայն
թէ ազատական կուսակցութեան գը-
լուխները Թուրքիոյ գործոց վրայ
լրաւ Պիքսֆիլդի նախարարութեան
անգամներէն բոլորովն տարբեր գա-
ղափարներ յայտնած լինելով , դժ-
ւար է Միւզիւրի փաշային ծա-
նուցած լրոյն մեծ հաւատք ընծայել :

Կը լսեմք թէ քաղաքապետական
խորհրդոյ անդամ Մարկոսեան Պետ-
րոս Եֆէնտիկին թաղապետական չոր-
րորդ շրջանակին նախագահ անուա-
նեւ է :

Կըսուի թէ Պրուսիոյ Լմանէթ-
հին ճանքան տաւաղակներու պատա-
հելով՝ քովը գտնուած 230 լիւրա ա-
ւանդը կտրուած է :

Կիւրդոս կղզւոյն 1296 տարւոյ (այն
է 1879 մարտի սկիզբէն մինչև 1880
փետրուարի վերջը) հասու թից յաւելուած

մարտ , որ 110 հազար ոսկոյ չափ է ,
Օսմ. Պանքային զրկուեցաւ կայսե-
րական գանձուն հաշուին համար :

Ոստիկանութիւնը նախընթաց օրը
Սուլթան Մեհմէտի թաղին մէջ Չիյնէ-
թի անուն թուրք գողուհւոյ մը տունը
կոխելով ամեն կողմը խուզարկեց ,
և մայրաքաղաքի շուկաներէն գող-
ցուած 4339 կտոր բազմաթիւ գու-
լան գտաւ , զոսկոյցէն , ոսկեղէն ,
արծաթեղէն , դրամեղէն , կերպա-
սեղէն , մետաքսեղէն , շալ , և ին
զորս վեց եղանակէ սայլերու վրայ
բեռնելով ոստիկանութեան դուռը
փոխադրեց :

Ասկէց տասն և հինգ տարի ա-
ռաջ ոստիկանութիւնն անգամ մ'ալ
յիշեալ գողուհւոյն տունը կոխելով
բազում գողոն գտած էր : Ըսել է
թէ այդ թշուառականն այն ժամա-
նակէն ի վեր վերստին այսպիսի բան
հաւաքեւ է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԹՅՈՒՆ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՒԷ	
Երէկ Երկուսի դպրոցեաց	41, 8
Այս առաւօտ դպրոցեաց	41, 12
Կէս օրին	41, 10
Բուսական երկարութիւն	Փր. 35
Թոյլ ազդում	Լր. 950
Քրոմոսայ	Օսմ. Լր. 3, 50
Մէթալիք	213
Պլինի	380

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ե.

Մուսուլի Կաթոլիկաց Պատրիար-
քին կողմէ երէկ առ Ամեն Ս. Պատ-
րիարք Հայրն ուղղեալ հեռագիր մը
տեղական սատրիկ սովուն նկատմամբ
Ն. Սրբազնութեան օգնութիւնն հայ-
ցելով կը ծանուցանէ թէ սովեալք
դիակներ կուտեն :

Բաղէչէն ալ Կաթոլիկ վարդա-
պետ մը դարձեալ առ Ն. Սրբազնու-
թիւնն հեռագիր քաշելով կը ծանու-
ցանէ թէ գաղաղ սովեալ ծնողքներ ,
չկրնալով իրենց սիրասուն զաւակաց
հաց մատակարարել , փողոյները ձը-
գելու ստիպուեւ են :

Ի նպատակ Սիոյ սովելոյ և Աղ-
գանուէր Հայրն հաց ընկերութեան
պատրաստուած պարահանդէսն երէկ
դիշեր տրուեցաւ ամենայն փառաւո-
րութեամբ :

Պարի սրահն ամենաշքեղ կերպիւ
զարդարուած էր , ճակատը լուսաւոր
մահիկներ կը ճառագայթէին , սրա-
հին մէջ տեղը Բոյնիոյ հոտաւետ
ջուր սիւնոյ աղբիւր մը կար : Եւրո-
պական երաժշտաց կուսմէն զատ
գինուորական նուագաւորաց կուսմը
մ'ալ կար , որք Օսմանեան և Եւրո-
պական ընտիր նուագներ կ'ածէին :

Ամեն ազգէ և երկու սեռէ բազ-
մաթիւ ականաւոր անձինք ներկայ
էին : Վեհ. Վաղի Օսման փաշան չը
կընալով ներկայ գտնուիլ անոր տեղ կը
նախագահէր Ֆերիդ փաշա մը քա-
նի մը բարձրատիճան սպայից հետ :

Պարերուն տար միջոցին յոնկարծ
սրահին կամարին վրայ հրեշտականը-
ման դիցուհի մ'երեցաւ , որ դամ-
բիւղի մը մէջէ հաղարար ծաղիկ
փունջեր և շաքարեղէններ տեղաց հան-
գիտականաց վրայ և յետոյ աներեղթ
եղաւ ի հիպոստիմ հանգիտականաց :
Չինուորական նուագարանք և փա-
տիշահով չօդ ետաւ : Երգը նուագե-
լուն , հանդիսականք բուռն ծափա-
հարութեամբ պատասխանեցին :

Պարերը մինչև առաւօտ տեւեցին
ամենայն կանոնաւորութեամբ , և
լաւ մը լուսնալէն յետոյ հանգիտա-
կանք մեկնեցան՝ գեղադուարճ երե-
կոյթի մը քաղցր յիշատակ տանելով
իրենց հետ :



ՄԱՀԱԳՈՅԺ

Յաւօք սրտի կը ծանուցանեմք
թէ Սիւսեան Մեծ. Սարգիս Եֆէն-
տիկ , շարաթ իրիկուն աղեաց բոր-
բոքմամբ հիւանդանալով , ճարտար
բժշկաց ամեն ճգանց հակառակ չը-
կրցաւ աղատիլ և երէկ ժամ 6ին իւր
մահկանացուն կնքեց ի հասակի 40
ամաց , ի սուգ անմխիթար ընկղմե-
լով իւր եղբարքն և զաւակունքն և
գառն կսկիծ պատճառելով իւր բազ-
մաթիւ բարեկամաց :

Յուդարկուորութիւնն այսօր պի-
տի կատարի ժամ 6ին Բերայի Ս. Եր-
րորդութեան եկեղեցին , ուստից
մարմինը ֆերի-քէօ պիտի փոխադրի :

Հանգուցեալ Սարգիս Եֆէնտիկ
գեղեցիկ յատկութեամբ օժտեալ
ընտիր անձ մ'էր , իւր անհիւ և քաղց-
րահամոյր բնաւորութեամբ զինք
ճանչողներուն ամենուն սէրն ու հա-
մակրութիւնը դրաւած էր : Բարե-
գործութեան , ինչպէս նաև ազգային
յառաջդիմութեան սիրահար , իւր
գրամն ու անձնական աշխատութիւ-
նը չէր խնայել երբէք , և մասնա-
ւանդ վերջին քանի մը տարիներուն
մէջ կարեւոր ծառայութիւններ մա-
տուցած է ազգին՝ ամեն բարեգոր-
ծական և յառաջդիմական ձեռնար-
կութեանց գործակցելով , Հիւան-
դանոցի հոգաբարձութեան ալ ան-
գամ լինելով , իւր յանձն առած ա-
մեն պաշտամանց պէս զայն ալ խղ-
ճի մօտք և անձանձիր փութալանու-
թեամբ կը կատարէր :

Այսպիսի անձինք հազուադէպ
լինելով ազգիս մէջ , իրենց մահը ,
մահաւանդ այսպէս երկտարաք հա-
սակի մէջ տարածում մահ մ'արդարեւ
զգալի կորուստ մ'է ազգին համար և
իրեւ այն՝ կրկնապատիկ ցաւալի :

Բերա 1903 մարտ 1880

... Խորագրապետ .

Արարատեան դիշերահանութիւն
կարգադիր Յանձնախումբը՝ ընդ գը-
րոյս իւր հաշուակշիռն հրատարա-
կելով , հաճոյական պարտք մը կը
կատարէ իւր խորին շնորհակալու-
թիւնները մատուցանելով այն ամեն
բարեսէր ազգայնոց և Հայասէր օ-
տարաց որք ոչ միայն իրենց ներկա-
յութեամբ պատուեցին Սեպտ. 23,
ինչպստ Արարատեան ընկերութեան
տրուած դիշերահանութեան Պիւլիւք-
տէրէ , այլ և մեծապէս նպաստեցին
Գանձնախումբին շնորհ , և յօժարա-
կամ մասնակցեցան մօտ 1000 ոսկոյ
գումարի մը հանդանակութեանը :

Գանձնախումբն թէև կը փախա-
քէր ո և է տպաւիկ գումար չթող-
լով իւր հաշուեկշիռն մէջ , աւելի
չուտով զայն հրատարակել , սակայն
զանազան արգելքներ չներեցին նմա
զայս :

Ի յիմաց Արարատեան

Գիշերահանութիւն Գանձնախումբին

Գորտուղար Նախագահ
Գ. Ներսիսեան Գ. Ս. Օրթան
Գանձապետ
Ս. Լաւեն

ՀԱՇՈՒՆԿԵԼՈՒ

Ի նպատակ Արարատեան ընկերութեան
1879 սեպտեմբեր 23ի տրուած Գիշերա-
հանութիւն .

Մոսկ

2500 տպաւի տոմարից 2500
Մանած ողորմի անդամաց կող-
մանէ և աւանձին ստորագրու .

Oct. 30, 1891

Եւճ. Կ. էֆէնտի ճիկէճճեան պա-
տիւ ունի ծանոցանել յարդոյ հա-
սարակութեան որ Ն. 2 Սինկը կոչ-
ւած կարի մեքեանս եւ իր գործի-
ները Սմերեկոյէն բերել տալի կէս
գնդով կը վճռուէ : Նոյնպէս եւ զա-
նազան տեսակ նոցր եւ ընտիր տպ-
րանքներ, զորոյ կրէպ ածածնադիւ-
րայ իրեն գիմիդ,յամանորդաց, Կեղե-
րտանաւոյնէն է կարիս ինքզին մէջը,
Կ. ճիկէճճեան թիւ 71 մօղազան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՇԱՐԳ ՄՈՒՀԱՐՔՊԷՍԻ ՀԻՔՆԱՅԷՍԻ
(Պատմութիւն ՍՐԷԷԼԵԱՆ պատեհրաղմի)

Բարեկիշատակ Վարդան պեյի վերջին հեղինակությունը և Սիհ-լան Ս. Բիվիապետեանի ծախիւք մինչև յայժմ հրատարակեալ վերոյիշեալ գեղեցիկ պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ հրապարակ եղած Ելլալով, կը ծախուի Կ. Պոլսի Նանի ճամբի Զիլիկիրիքէր ճատտէօսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատանը, Մարբիճ-ճիններու մէջ Ա. Ռ. Գանթար տը-պարանը և Թերճմանը Էփքետը Լը-րադդոյ դրուիչ Պ. Վիլենի մէջոյալ ։

Իրկու հատորին գինն է 3 արծաթ մէճրոյ ։



ԱՅՆՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մազերուն թափիլը չուզեր, «Այերի վիճօր» կաշուած մազի անուշահոտ ջուրէն դորձած ելուէ, ուրիշ տակէ տեսակ մաղի ջուրերը կաւիլելով «որ մազ չի թափելու համար կը ձայնուին, բորբոն ալ անօգուտ են» իսկ վիկորի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պօլսոյ ու գաւառացի սէշ օր օրի դորձած ողորներուն թիւը կաւեւանք : Անեւք որ իրենց մազերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, չուտով դորձած են առ ջուրէն որ իվէրջոյ չղջման թափելու փայլ եղող մազերը կը հոտաւոր տաւէ ու կապմբանդէ, թափածներուն տեղը մազ կը բւսցնէ երբոր մազերուն աղմաւոր վնասուած չէ, ու ճերմըկած մազերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, դորձած ելուն կերպը չի բերուն հետէ : Կը ծախուի կ. Պօլիս Ղալաթիա Թինաուտան և Ընկերաց Ամերիկայի Մարդրան :



၇၄၇

Ամերիկայի Ջրհաներ
մեծ և փոքր, երկայն
թե հասաաաուն խող-
վակներով թե ջրէնդ-
ներուն և թե կայունի
հորերու համար ա-
ժան դներով կը ծախ-
ուի, Կ. Պալէս Դալա-
թիայ Մինսոնսն և
ընկերաց Ամերիկայի
մայրապան :



0 2 5 8

Անուշահոտ օճառ, մորթը կը կա-
կուզցնէ ու լեղի ջուրով ալ կը փըր-
փըրի, տեսաւիլ խիստ ազնիւ ու գի-
նը շատ աժան է. կը ծախուի Կ.
Պօլիս Ղալաթիա Մինասեան և ընկե-
րաց Ամերիկայի Վաղաղան :



THE UNIVERSITY OF CHICAGO

ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՄԵՐԸ

1880 ՄԱՐՏ 15 ՀԱՐԱԹ՝ ՕՐԷՆ ՄԿՍԵԱՆ

ՄԻՆԶԵՆԻ ՄԱՐՏ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ, ՇՈԳԵՆԱԻՆԵՐԸ

Ճատ	Եւրոպական և շէրք	Թի-
12 15	Եկեմահալէկն Մէջար, Պէօյիք, Թար, Եկեիք, Սթէն, 33	
	Պոյաճ, Բ Հիսար, Պէպէք, (Արնառւում զԷպի լոքեհաւին հետ պիտի հաղարդակցին)	
1 15	Եկեմահալ, Մէջար, Պէօյիք, Թար, Եկեիք, Էմիր, 20	
	Բ Հիսար Պէպէք	
2	Բ Ա Ղալմազէն Եկեմահ, Մէզ, Պէօյիք, Թար, Եկ- 32	
	եիք, Սթէն, Էմիրի, Պոյաճը, Բ Հիսար, Պէպէք, Արնալ, Օրթաք, (Արբաթ օրերը Գաւառ, Պէլիկ)	
3 15	Մէջար, Պէօյիք, Թարապիւս, Եկեիք, Սթէն, 33	
	Էմիրի, Բ Հիսար, Պէպէք, Արնալ, Գաւառ, Օրթաք, Պէլիկ, (Արբաթ օրերը և 2/3 Եկեմահալէկն)	
5	Եկեմահ, Մէջար, Պէօյիք, Թար, Եկեիք, Էմիրի, 21	
	Պոյաճ, Բ Հիսար, Պէպէք, Արնալ, Օրթաք, Պէլիկ, (Բացի ուրաթէն):	
6 30	Եկեմ, Պէօյիք, Թար, Պէլիք, Էմիրիկն, 4	
	Գալլըճա Բ Ա Հիսար, Գաւալլի, Արնալ, Չէնի, Պէլ, Օրթ, Գալլիճաճ, Պէլիկ, Խսկիւտար :	
8	Ա. Է. Բ. Գալմազ Եկեմահ, Մէջ, Պէօյիք, Թար, 20	
	Պէլիք, Եկեիք, Էմիրի, Պոյաճ, Բ Հիսար, Պէպէք, Արնալ, Գաւր, Օրթաք, Պէլիկ, (Արբաթ օրերը Սթէնեա) :	
10	Մէջար, Պէօյիք, Թարապիւս, Եկեիք, Էմիրիկն, Բ Հիսար, Արնալ, Օրթաք, Պէլիկ, 22	

Այն քան թէ զի

12	30	Արնալ, Գուր, Օրթաք, Պէշիկ.	28
1		Արնալուքէջ, Գուրուշ, Օրթաք, Պէշիկ, Գաղաթ:	2
1	30	Պէշիկ, Արնալ, Գուրուշ, Օրթաք, Պէշիկ, Գաղաթ.	22
2	15	Արնալ, Գուր, Օրթաք, Պէշիկ.	28
3		Արնալ, Գուր, Օրթաք, Գաղաթ, Պէշիկ, (Բաղն աւաղաթ.)	2
10	15	Արնալ, ռազդիկի կամուրջ:	21
10	45	Գուրուշ. »	28

$U_1 = \frac{1}{2} m_1 v_1^2 + \frac{1}{2} m_2 v_2^2$

12 30 Պէյքօղ, Իսաշաղ. Բ. Փաշա մահ: Գանձըճա, Ա. Հի- 21
սար, Գանձիլիլի, Վ անիք. Չէնիէթէօյ, Պէյլի, Գուշի:



“ Կատարելով ”

WESLEY D. C. CLIFFORD

Աշխարհածանօթ Մաշ 'Երրորդը'.
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR
RESTORER.)

Երբեք չէի քննարկում նորագեղու Ալեքոյ
Սաղը իր երիտասարդական գոյնին,
լնծայելով անոր նոր կեանք, աճում,
և փալլուն գեղեցկութիւն: Իր ար-
դիւնքը ստեղծւեց փառսբայւ, շուտով
փանեկում արեւորութիւնը: Դերկ մի հ:

Միշտ կը հաստատուէ ինքնին իբր
Մաքին բնական զօրացուցիչն :

— արադ արադ, կույն, կույն, արադ արադ —
 Ի՞նչ, ի՞նչ, — արադ, — արադ:

Գլխաւոր Միջերանոցը (Մաղաղան) է,—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, LONDON, E.C.4 :

Եւ ծախուի ամէն կերծծամալաճառնն ընն, Ընու շահոտ Իւղալա-
ճառնն ընն, Եւ Ընդդիմացի Գեղալաճառնն ընն :

Դ. Պօլևս Ս. Բանգիւլը եղբայրդ քով, Ֆարմասի Պրիմանիք
Բէրա Մեծ փողոց և Լաւմնա Բարիւհնայի քով, Սնդ-
ղիական մթերանոց, Եիւքսէք Դալադրում Հալաթիա:



ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՅ

Յայտնի է որ երախայք ծնանեւէն մինչ երեք տարեկան հասակը դռն թէ շարունակ վերի ցաւ. վերահարուն թիւն, ստամբախ անհամար ստու թիւն անըուն մնալ, չղային զգոռու թիւն և այլն կունենան, մասնաւոր ահուտ հանելու միջոցին, և այս ներդու թիւն ներս ալ աւելի կըստստիկանան ստուտ ևան տար եգանակին: Ստ թինկ Շիւրթը վերջիշեալ դժուարութեանց ա մեռուն ալ առաջըը կառնէ ու կը բը ժըլիէ, որով երախան կը հանդիս ու կը զօրանայ յուրախութիւն մեծ լըր ծնողաց : Գործածողները շատ դժեք են : Բււողըը կրնայ վերծել . զինն ար ժանէ . նորածին երախայից կաթիւ լով կը արոււն, վեց ամիսէն վեր կըդ զին օրը երեք անաւ շիւրթիւ . կը ծախուէ ի Պօլիս Գալատիս Մինաս եան և ընկերաց Ամերիկայի մայրաքան

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՄ ԼՐԱԳՐՈՅ
ՉԱՆԱԹԱ ՆՕՐՈ ԽԱՆ